

Մամլո հաղորդագրություն

Հունիսի 30, 2022

Ստորագրվեց Հայաստանում կանաչ ջրածնի արտադրության առաջին արդյունաբերական ցուցանմուշի կառուցման համար համագործակցության համաձայնագիր

Լիոն, հունիսի 30, 2022 – «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը (ՔՈԱՖ) և HyGreenCo ընկերությունը (French group Solges-Energy-ի դուստր ձեռնարկություն) ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Վաչե Տերտերյանի, ՀՀ-ում Ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպան Անն Լույոյի, Ֆրանսիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Հասմիկ Տոլմաջյանի ներկայությամբ ստորագրեցին Հայաստանում կանաչ ջրածնի արտադրության սմարթ ցանցի առաջին արդյունաբերական ցուցանմուշի կառուցման շուրջ համագործակցության համաձայնագիր՝ ինտեգրելով կանաչ ջրածնի արտադրության ողջ շղթան:

Արդյունաբերական այս ցուցանմուշը, որ մշակվել է «Ֆրանսիական հետազոտական ինստիտուտներ և լաբորատորիաներ»-ի կողմից, Էկոլոգիապես մաքուր Էլեկտրաէներգիա կմատակարարի Լոռու ՔՈԱՖ ՍՄԱԲԹ կենտրոնին, իսկ այնուհետ նաև Դեբետ գյուղին: Արևային կայանն արտադրելու է Էլեկտրաէներգիա, որը սնելու է կանաչ ջրածին արտադրող ֆրանսիական տեխնոլոգիայով ստեղծված Էլեկտրոլիզերը: Արտադրված և պահեստավորված ջրածինն այնուհետ կամ կմատակարարվի ջրածնային կայան, կամ կվերափոխվի Էլեկտրաէներգիայի, ինչի արդյունքում սպառողները կստանան Էլեկտրաէներգիա առանց CO2 արտանետումների:

Վերականգնվող Էներգիայի արտադրման այս նորարարական գործընթացը լուծում է ընդհատումների խնդիրը, որն առկա է արևային Էներգիայից և քամուց Էլեկտրաէներգիայի ստացման ընթացքում: Այս ցուցանմուշը հետագայում տեխնոլոգիապես կգարգանա, և կստեղծվեն նախադրյալներ, որպեսզի այս տեխնոլոգիան լայնամասշտաբ կերպով կիրառվի Հայաստանում:

Հետևելով ածխածնային չեզոքության մոտեցմանը՝ Ֆրանսիան ջրածինը դիտարկում է որպես ապագայի Էներգիայի աղբյուր և աշխարհում լավագույնն է վերջինիս արտադրման ու փոխակերպման տեխնոլոգիաների արտադրության ոլորտում: Հայաստանն էլ իր հերթին ունի պարտավորություն՝ նվազեցնելու ածխածնի իր արտանետումները և ստեղծելու օրինակելի կանաչ տնտեսություն:

Ֆրանս-հայկական այս համագործակցությունը մի կողմից թույլ կտա ֆրանսիական ընկերություններին զարգացնել իրենց տեխնոլոգիաները մաքուր էներգիայի՝ մասնավորապես ջրածնի արտադրության ոլորտում, մյուս կողմից կօգնի Հայաստանին աշխարհում զբաղեցնել ածխածնի արտանետումների ցածր մակարդակ ու զարգացող կանաչ տնտեսություն ունեցող երկրների շարքում:

Այս նախագիծը «Ֆրանսիա-Հայաստան հավակնություններ» ճանապարհային քարտեզի, որ ստորագրվել է Ֆրանսիայի ու Հայաստանի միջև 2021թ. դեկտեմբերի 9-ին, առաջին ձեռքբերումներից է: Ստորագրված ճանապարհային քարտեզի նպատակն է խորացնել երկու երկրների համագործակցությունը կայուն զարգացման ու նոր տեխնոլոգիաների ոլորտում:

Solges-Energy խմբի տնօրեն Արմեն Սեդեթյանը նշում է. «Հայաստանը յուրահատուկ հնարավորություն ունի զարգացնելու վերականգնվող էներգիայի ոլորտում ֆրանսիական տեխնոլոգիաները և ստեղծելու իրական արդյունաբերական ճյուղ՝ գործակցելով մեզ հետ համագործակցող և Ֆրանսիայում սարքավորումներ արտադրող կազմակերպությունների հետ: Մենք ցանկանում ենք նպաստել Հայաստանի՝ կանաչ տնտեսություն զարգացնելու նպատակի իրագործման ու, օգտագործելով ֆրանսիական արդյունաբերական ներուժը, վերջինիս դարձնել տարածաշրջանի առաջին սմարթ և կանաչ պետությունը: Արդյունքում՝ Հայաստանը շատ շուտով կարող է տեխնոլոգիական առումով դառնալ հիանալի օրինակ եվրասիական տնտեսական տարածքի, Իրանի ու Պարսից ծոցի երկրների համար»:

ՔՈԱՖ-ի գործադիր տնօրեն Կորյուն Խաչատուրյանն էլ իր հերթին նշեց. «Ճատ ուրախ ենք SOLGES-ENERGY խմբի հետ մեր համագործակցության համար, քանի որ վերականգնվող էներգիայի արտադրման նախագիծը ևս մեկ հավելում է ՍՄԱԹԹ կենտրոնի նորարարությանն ու կայուն զարգացման հնարավորություններին: ՔՈԱՖ-ը մշտապես եղել է կայուն զարգացման մոտեցման կրողը, ինչն էլ ապահովել է մինչ օրս իրականացրած նախագծերի ամբողջականությունը: Սա ևս մեկ հնարավորություն է մեզ համար՝ նպաստելու Հայաստանի իմիջի բարձրացմանը՝ որպես երկիր, որ հավատարիմ է վտանգավոր արտանետումների նվազեցման գլոբալ մոտեցմանը»:

Կոնտակտներ.

SOLGES-ENERGY - Սերժ Խավեսյան, զարգացման և հասարակայնության հետ կապերի գծով փոխտնօրեն, serge.khavessian@solges-energy.com

ՔՈԱՖ - Կորյուն Խաչատուրյան, գործադիր տնօրեն, korioun.khatchadourian@coaf.org

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի մասին

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը (ՔՈԱՖ) բարեգործական կազմակերպություն է, որի նպատակն է բարձրացնել Հայաստանի գյուղաբնակների կյանքի որակը համայնքային զարգացման երեխայակենտրոն ծրագրերի միջոցով: Հիմնադրամի համակողմանի ծրագրային մոդելի իրագործումը սկսվել է 2004թ., և այդ ժամանակից ի վեր իրականացվում են կրթական, առողջապահական, սոցիալական և տնտեսական ծրագրեր, ինչպես նաև հիմնանորոգվում են համայնքների համար կենսական նշանակություն ունեցող ենթակառուցվածքները: Այս ծրագրերի շահառուներն են Հայաստանի Արմավիրի, Արագածոտնի, Լոռու, Գեղարքունիքի, Շիրակի և Տավուշի մարզերի 64 համայնքների ավելի քան 107,000 բնակիչները:

2015թ. սկսած՝ ՔՈԱՖ-ը մշակել և իրագործում է ՍՄԱՐԹ նախաձեռնություն: ՍՄԱՐԹ-ը կրթության միջոցով առաջխաղացում է ապահովում գյուղական աշխարհի համար, ինչի արդյունքում շահում են անհատները, հասարակությունը և միջավայրը:

ՔՈԱՖ ՍՄԱՐԹ առաջին կենտրոնը տեղակայված է Լոռու մարզի Դեբետ գյուղում. բացումը կայացել է 2018 թ. մայիսի 27-ին: